ՀԱՄԱԶԳԱՅԻՆ

ՅՕԳՈՒՏ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՕՆԴԻ

—

Ստացանք Թիֆլիսում պ. Աբրահամ Բեօրակճեանից 10 ր.։ Ուրեմն նախկին ստացած 167 րուբլու հետ (տես «Մշակ» № 215) մենք ունենք 177 րուբլի։

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՏԱՌԵՐԻ ԳԻՒՏԻ ՅՈԲԵԼԵԱՆԸ

—

Թիֆլիսի հայ վաճառականութեան կողմից Էջմիածին գնացող պատգամաւորութեան կազմը, ինչպէս մեզ հաղորդում են, հետեւեալն է. պ. պ. Արշակ Միլեան, Մն. Մարտիրոսեան, Խաչ. Աֆրիկեան, Ստ. Սուլխանեան, Ս. Կիւլպէնկեան, Ա. Բօղարջեան և Գր. Նախշունեան։ Պատգամաւորութիւնը ներկայացնելու է ուղերձ։ Քաղաքիս կուլտուրական և դպրոցական հայ հաստատութիւններն ևս սկսել են հետզհետէ նշանակել իրանց պատգամաւորներին Էջմիածին գնալու՝ համազգային յօբելեանին մասնակցելու համար։

—

Սեպտ. 25-ին Բագւում Մարդասիրական Ընկ. նախաձեռնութեամբ հայոց դպրոցի շէնքում կայացաւ տեղական հայ հաստատութիւնների ժողովը, տառերի գիւտի և տպագրութեան յօբելեանը տօնելու նպատակով։ Նախագահ պ. Տէր-Միքայէլեանը ժողովը բանալով յայտարարեց, որ այդ խնդրի շուրջը Բագւում մինչև այժմ շատ բան չի արվել, ուստի և հայ հասարակութիւնը պարտաւոր է մտածել իր համազգային մեծ տօնի յաւերժացման մասին։ Կուլտուրական Միութեան ներկայացուցիչը աշխատում էր ապացուցել, որ Կուլտուրական Միութիւնը վաղուց այդ բանի համար աշխատում է և նրա նախաձեռնութեամբ ընտրվել է նոյն իսկ մի մարմին։ Ժողովը անբաւարար համարելով եղած կազմը՝ յարմար գտաւ ընտրել բոլոր խմբերից մի նոր յօբելեանական մարմին, որի մէջ մտան նոյնպէս նախկին անդամները։ Ընտրվեցին Յ. Յովհաննիսեան, Ս. Յակոբեան, Ա. Ներսէսեան, Ե. Թաղիանոսեան, Կարա-Մուրզա, Ա. Տէրտէրեան, Գ.

ՅՕԲԵԼԵԱՆ

Գեղամեան, Արտակ վարդապետ։ Հին անդամներն են տիկ. Ադամեան, Տիգրանեան, Պապովեան, Սարգսեան, Պալեան, Զարաֆեան, Կոստանեան, Խաչատրեան։

(«Բաց. Զ.»)